13 (95). ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆԸ

Իմաստուն Սողոմոնը թաքավոր էր։ Էդ մարթը ղոնաղներ ունիր ղավ։ Կնիկը կըսե թե.— Դու ի՛նչղ թաքավոր ըլլիս օր հավքունանց լիզուն կը հասկընաս. էդոնց թերուրնին փետե, ալ ու խալխալ շարե։

— Է՛,— թաքավորը կըսե,— կըլլի՞։

Կնիկը կըսե.— Է՛, թաքավոր, էս օրա հրամանդ ըլլի պիտի։

Թաքավորը կանչեց հավքերուն, հավքերն էկան, փետուրները փետեց, հավքերուն ցկեց քընըր։ Հիմի էդիկ էղավ օր հավքերուն էրկուսը չէկան, էքսի օրը էկան. էկան օրա, էդոնց թաքավորն ըսավ.— Ինչի՞ հրամանս մերժեցիք։

Հիմի էդ հավքերուն մեկը կըսե թե.— Մե բանըմ ըսեմ՝ էտիկ ինձի պարզե, հ՞ետև ինձի էդոնց պես փետե, ցիկ վար։

— Հըպը,— հավքը կըսե իմաստուն Սողոմոնին թե,— կնիկմա՞րթն է շատ, թե՞ էրիկմարթը։

Թաքավորը կըսե.— Էրիկմարթն է շատ։

— Ցավաշ,— քոռ բուֆ հավքը կըսե,— եթե տղամարթը շատ է, հըբը դու իդի՝ հավքերուն ինչի ես փետե, էդոնք ձաք ունին, կուտ պիտի փերվի, շուր պիտի փերվի։ Հիմի էդ հավքերը վերոնք օր ձաք ունին՝ ի՛նչ տի էնեն էդոնք։ Կնիկդ քեզի ըսավ թե՝ հավքունանց կանչե, փետուրնին առ, հիմի էդոնք ի՛նչըղ պիտի ըլլին։ Էրածդ էղա՞վ. կընկանդ բերնին աշեցիր, էդոնք փետեցիր։ Էդտեղ քոռ բուֆը իմաստուն Սողոմոնին կըսե թե.— Տղամարթը շատ չէ, կնիկմարթը շատ է, դունէ կնիկմարթ ես, կնկանդ բերնով ես դու փետե։